*Հավելված N 2*
*ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*
*2026թ.-ի հունիսի 15-ի N 1.2 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026թ.-ի հունիսի 15-ի N 1.2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ:** Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում՝ 84-րդ չափաբաժնի մասով տեղի է ունեցել վրիպակ, որի արդյունքում նշյալ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրն անհրաժեշտ է փոփոխել և ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում՝ 84-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը փոփոխվել և ներկայացվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

«Ծալվող աստիճան - M-աձև կառուցվածքով, բացովի, ամուր հենակով, կառուցատարրի նյութը՝ալյումին կամ ֆիբրոթելային կոմպոզիտ, բարձրությունը լրիվ բացված վիճակում ոչ պակաս 4,6մ, քաշը ոչ պակաս 13կգ, ոտքերին պետք է ամրացված լինի չսահող ռետինե փականներ: Չափսերի շեղումը +-2%: Նմուշը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ ըստ անհրաժեշտության տարբերակով:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն